

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՊԱՐԵՆԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Արտակարգ պարենի օգնություն տեղահանված սիրիահայ բնակչությանը

(ԱՐՏԱԿԱՐԳ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 200558)

ՆԱԽԱԲԱՆ

Արձագանքելով Հայաստանի Հանրապետության սիյուռքի նախարարության (այսուհետ՝ Նախարարությունը) 2013 թվականի հունիսի 6-ին Միավորված ազգերի կազմակերպության Պարենի համաշխարհային ծրագրին (այսուհետ՝ ՊՀԾ) ուղղված գրությանը, ՊՀԾ-ն համաձայնել է տրամադրել համապատասխան աջակցություն և օգնություն:

Նախարարությունը և ՊՀԾ-ը (այսուհետ՝ Կողմեր) ստորագրել են սույն համաձայնագիրը, հիմք ընդունելով 2000 թվականի հունիսի 9-ին կնքված Հիմնական համաձայնագիրը (այսուհետ՝ Հիմնական համաձայնագիր):

Սույն համաձայնագրով նախատեսված՝ ՀԱՅԱՍՏԱՆ 200558 ԱՐՏՕԳ. Արտակարգ պարենային օգնություն տեղահանված սիրիահայ բնակչությանը ծրագրային գործողությունները (այսուհետ՝ Ծրագիր) կիրականացվեն սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո հնարավոր առաջին իսկ օրը՝ համաձայն սույն համաձայնագրի 5.1 կետի:

ՀՈԴՎԱԾ 1

ՊՀԾ օգնության նպատակը և նկարագրությունը

1.1 Ծրագրի նպատակները համապատասխանում են ՊՀԾ ռազմավարական նպատակ 1-ին՝ «Փրկել մարդկային կյանքեր և պաշտպանել նրանց գոյության միջոցները արտակարգ իրավիճակներում», մասնավորապես՝

- պահպանել մարդկանց պարենային ապահովությունը, և
- պաշտպանել նրանց գոյության միջոցները, օգնելով կանխել նրանց կողմից ունեցվածք վաճառելը:

1.2 Ծրագիրն իրականացվում է 2013 թվականի նոյեմբերից մինչև 2014 թվականի ապրիլի 30-ը: Այս ժամանակամիջոցում Նախարարությունը կիրականացնի սիրիահայերի կայուն ինտեգրման համապատասխան ռազմավարություն և ծրագիր:

1.3 Շահառուները՝ 2013 թվականի հունիսի 6-ի տվյալներով, կազմում են Հայաստանում գտնվող ընդհանուր հաշվով 8000 տեղահանված սիրիահայերից 5000-ը: Վերջիններս կարիքավոր են ճանաչվել Նախարարության կարիքավորության գնահատման արդյունքում, որն իրականացվել է Հայաստանի Հնարապետությունում գործող «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» տեղական հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) աջակցությամբ:

1.4 ՊՀԾ-ի հատկացրած պարենը կբաշխվի անվճար, առանց խտրականության և լիովին անկողմնապահ, անկախ ռասսայական, ազգային ու կրոնական պատկանելությունից, քաղաքական հայացքներից կամ սեռից, օգնությունն ուղղակի կամ անուղղակի կերպով չօգտագործելով կրոնական կամ քաղաքական համոզության նպատակների համար: Պարենը կտրամադրվի ընդհանուր բաշխման կարգով 6 ամսվա ընթացքում:

Շահառուներին կտրամադրվի պարենի փաթեթ՝ հետևյալ օրական չափաբաժիններով.

Ցորենի այլուր – 400գ, Բուսական յուղ – 35գ, Ոլոռ – 35գ, Բրինձ – 35գ, Մակարոն – 35 գ:

ՀՈԴՎԱԾ 2

ՊՀԾ-ի պարտավորությունները

2.1 Ըստ ստորև նշված պարենի բոլոր և մասնավորապես առանձին տեսակների առկայության, ՊՀԾ-ը դրանք նշված քանակներով ՊՀԾ մատակարարից կընդունի քաղաք Վանաձորում գտնվող առաքման կետում: Պարենի ստորև նշված ընդհանուր քանակի արժեքը (բեռնափոխադրման, տեղական փորձագիտական ծառայության և վերահսկման ծախսը ներառյալ) կազմում է 667.721 (վեց հարյուր վաթսուևյոթ հազար յոթ հարյուր քսանմեկ) ԱՄՆ դոլար:

360 տոննա ցորենի այլուր

34 տոննա բուսական յուղ

32 տոննա ոլոռ

32 տոննա բրինձ

32 տոննա մակարոն

2.2 ՊՀԾ-ի մատակարարները միջոցներ կձեռնարկեն Ռուսաստանի Դաշնությունից ստացված պարենի բոլոր տեսակների առաքումը պատշաճ կերպով ապահովագրելու համար: Պարենի կորստի կամ փչացման դեպքում ՊՀԾ-ն համապատասխան հայց կներկայացնի իր կողմից նշանակված անկախ փորձագետի կազմած հաշվետվության հիման վրա: Պարենի տեսակների բաշխումը շահառուներին պայմանավորված կլինի դրանց ապահով տեղ հասնելով:

2.3 ՊՀԾ-ը պատասխանատու կլինի սույն համաձայնագրի 2.1 կետում նշված պարենի օրական բաժինները ք. Երևան, Չարենցի 20 հասցեում գտնվող Հայ օգնության

